Կարգապահական գործ թիվ ԿԳ-19163

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի փետրվարի 4-ի թիվ 44-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/40-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՄԱԼՅԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի և Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Ամալյա Աբովյանին (արտոնագիր՝ թիվ 1359) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.2019թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Ամալյա Աբովյանն ունի 65. 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով 2018 թվականի ապրիլից 2019 թվականի ապրիլ (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

01.08.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 328-Ա/ԿԳ-19163 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Ամալյա Աբովյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ

հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 08.08.2019թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 17.12.2019թ., ժամը 19:38-ին և 04.02.2020թ., ժամը՝ 19:28-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

22. 08. 2019 թվականի Պալատ մուտք է եղել փաստաբան Ամալյա Աբովյանի դիմումը, որով վերջինս հայտնել է, որ մեկ տարի անդամավճար չի վճարել, քանի որ ունի երկու փոքրահասակ երեխաներ, որոնք ունեն աչքի տեսողության հետ կապված լուրջ խնդիրներ: Փաստաբան Ամալյա Աբովյանը խնդրել է կասեցնել իր արտոնագրի գործողությունը երեք տարի ժամկետով:

Փաստաբանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Ամալյա Աբովյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 14.07.2012թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Ամալյա Աբովյանն ունի 65. 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով 2018 թվականի ապրիլից 2019 թվականի ապրիլ (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.2019թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Ամալյա Աբովյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 04.02.2020թ. տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Ամալյա Աբովյանի (արտոնագիր՝ 1359, ստացված՝ 14.07.2012թ.) նկատմամբ 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում

է, որ փաստաբան Ամալյա Աբովյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:* Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ՝ նաև Կարգ**) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Փաստաբան Ամալյա Աբովյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.2019թ. տրամադրված տեղեկանքով: Ավելին՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերընշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելուժամանակ էլ վերընշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ փաստաբան Ամալյա Աբովյանը սույն որոշումը կայացնելու դրությամբ իր անդամավճարի պարտքը չի մարել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ամալյա Աբովյանին (արտոնագիր՝ թիվ 1359) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Ամալյա Աբովյանի (արտոնագիր՝ թիվ 1359) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ամալյա Աբովյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

04 փետրվարի 2020թ.
թիվ ԿԳ/40-Ա
ք. Երևան